ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

# ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

002 , Երևան 2, Լեո փողոց N 17 | հեռ. 53-57-83, 53-57-71

N 07- Ե / 49 | 29 . փետրվար .2016թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակիցներ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում « Թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք(ներ):

Ապրանքների մատակարարման պայմաններն են՝

Ընկերության պատվերի առաքում, պատվերը ընդունելուց մինչ երկու օրվա ընթացքում: Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում 1ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-16/5:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Լեո 17 հասցեով, մինչև 2016թ. Մարտի 11-ը, ժամը 12:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն « Թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ –ի շենքում, ք. Երևան, Լեո 17 հասցեով, մինչև 2016թ. Մարտի 11-ը, ժամը 12:30-ը:

Գնման առարկա է հանդիսանում « Թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ -ի կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը:

« Թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ -ի կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման (որը կազված է՝_17_ չափաբաժից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) կից:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնման ընթացակարգին սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված N 2):

գ. <<Մասնագիտական փորձառության>> վերաբերյալ (Հավելված N 3.1 ):

դ. <<Ֆինանսական միջոցների>> վերաբերյալ (Հավելված N 3.4 ):

ե. գնային առաջարկ (Հավելված N 4): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

զ. Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ (Հավելված N 4.1):

է. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու դեպքում (Հավելված N 4.2):

ը. հրավերով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ (Հավելված N 5):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

« Թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumner.1pol@gmail.com:

Տնօրեն | Ռ. Հայրապետյան